1991 թվականին պատմական բարենպաստ շրջափոխությամբ հայ ժողովուրդը ունեցավ իր անկախ հանրապետությունը, դարձավ միջազգային հանրության լիիրավ անդամ: Թեև ծանր են քաղաքական և տնտեսական պայմանները, սակայն հայ մարդու հոգին և հայացքը լի է վաղվա հույսով և պայծառ գալիքի հավատքով: Այդ հավատքով էր, որ նա ազգովին գնաց դեպի ընտրական տեղամասերը ընտրելու իր հույսն ու հավատքը արդարացնող հանրապետության նախագահին: Եվ ընտրվեց հայոց անկախ հանրապետության առաջին նախագահը ձայների բացարձակ մեծամասնությամբ և ժողովրդական խանդավառության պայմաններում: Ազգը ընտրեց իր երիտասարդ, լրջախոհ ու շրջահայաց որդուն՝ Լևոն Տեր-Պետրոսյանին:

1991 թվականի նոյեմբերի 11-ին եռագույն դրոշներով զարդարված էր հայոց խորհրդարանը: Հայաստանի Հանրապետության ազգընտիր նախագահը երդվում էր Աստծո և ազգի առաջ՝ լինել Հայրենիքի ու ժողովրդի անվտանգության և բարգավաճման երաշխավորը: Հանդիսավոր արարողությանը իր օրհնության և բարեմաղթանքի խոսքը բերեց նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մեծայարգ Տիար Նախագահ,

Գոհությամբ Աստուծոյ ամենակալին որ Մեզ պարգևում է այս անգամ պահը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից բերելու Մեր յարգալիր ողջույնը Ձերդ Գերազանցությանն, առաջին ազգընտիր նախագահիդ, Հայաստանի ինքնիշխան անկախ Հանրապետության:

Բազում դարերի մեր ազատատենչ նախնեաց երազանքն է որ ահա պայծառ իրականություն է դառնում:

Մեր հայրենի քաջարի ժողովրդի, մեր հանրապետության խորհրդարանի ու կառավարության որդեգրած անկախության գործընթացը, իր լրումին է հասնում այսօր, Ձեր հանդիսաւոր երդման արարողությամբ:

Բոլոր հայերը, ի Հայաստան և ի սփիռս աշխարհի հոգևին այստեղ են գտնում մեր կողքին և տօնախմբում են այս պատմական պահը: Վկայ է նաև սուրբ-գրական երկնամերձ մեր Արարատը:

Յարգարժան Տիար Նախագահ, ճշմարիտ է որ մենք բոլորս ցնծությամբ տօնախմբում ենք Ձերդ Գերազանցության գահակալումը, սակայն միաժամանակ գիտենք որ երդման այս արարողությունը հանդիսանում է նաև զոհաբերումի մի արարողություն: Չի գիտակցում ենք թէ այս ժամից սկսեալ, ինչպիսի ծանրածանր պատասխանատուություն էք ստանձնում, բոլորիս ծա-

ևօթ և բոլորս մտահոգող, մերօրեայ տագնապալի պայմաններում: Այո՛, մենք Ձեզ զոհաբերում ենք Հայրենիքի պատարագի սեղանի առաջ:

Մենք տարակոյս չունենք, որ Դուք աւելի ստուգութեամբ քան մենք, Ձեր հոգու աչքերով տեսնում և ապրում էք Գողգոթայի Ձեր ճանապարհը, պատրաստ դիմագրաւելու ամէն վտանգ, ամէն տառապանք, արբազան մի պարտականութիւն կատարելու ազնիւ տեսիլքով:

Մենք քրիստոնեայ ենք և հաւատում ենք որ զոհաբերումով միայն կարելի է հասնել յաղթութեան:

Յանուն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու աղօթում ենք որ Ձեր առաքելութեան ճանապարհը պսակուի յաղթութեամբ:

Ձեզ՝ Մեր յարգանքը, Մեր զօրակցումը, Մեր օրհնութիւնը:

«Գիշերն մերժեցաւ և տիւն մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետև զգործսն խաւարի, և զգեցցուք զզէնսն լուսոյ»: (Հռոմ. ԺԳ. 12) Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 Նոյեմբեր 1991 թ.